

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԴՊՐՈՑԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՊՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝
«Լորի» ՍՊԸ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝
«Էկոնոմ Էկո ՍՊԸ»

Երևան, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	8
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	9
4. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	9
4.2 Սեյսմիկա և երկրաբանություն	10
4. 3 Կլիման և օդային ավազան	11
4.4 Հողային ռեսուրսներ.....	16
4.5 Զրային ռեսուրսներ.....	17
4.6 Կենսաբազմազություն.....	19
Բուսաբանական գոտիներ	19
Կարմիր գրքյան բույսեր Կոտայքում	20
Տիպական բուսականություն.....	20
Կարմիր գրքյան բույսեր, որոնք հանդիպում են Լեռնանիստի շրջակայքում.....	20
Կաթնասուններ.....	21
Թռչուններ.....	22
Սողուններ.....	22
Երկկենցաղներ	22
Ձկներ.....	22
4.7 Պատմության, բնության և մշակութային հուշարձաններ	23
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....	26
5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ.....	26
6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ/ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....	29
7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՆԵՄԱՆ	32
7.1 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ.....	33
7.2 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն.....	34
7.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	36
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	37
8. 1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր.....	37
8. 2 Արտանետումների աղբյուրները.....	37
8. 3 Մթնոլորտային օդ.....	38

8. 4 Զրային ռեսուրսներ.....	38
8. 5 Հողային ռեսուրսներ	38
8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	40
8. 7 Հակահրդեհային միջոցառումներ.....	40
8. 8 Աղմուկ և թրթռում	41
8. 9 Թափոնների կառավարում	43
9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....	46
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ.....	55
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	62
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԿՈՐԴԻՆԱՏՆԵՐ.....	64
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	65
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....	66
.....	69
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ	70
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԴԻՄՈՒՄ՝ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ և ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ.....	71

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնող	Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏՀ)
Նախաձեռնողի հասցեն՝	«Լուք» ՍՊԸ, հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բն. , Էլ. Հասցե՝ lookarchcompany@gmail.com
Նախատեսվող գործունեության հասցեն՝	Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի , Լեռնանիստ բնակատեղի
ՇՄԱԳ հաշվետվության մշակման խորհրդատու՝	«Էկոնոմ Էկո» ՍՊԸ , հեռ.՝ +374 93401840 Էլ. հասցե՝ economecoeia@gmail.com
Հողամասի ընդհանուր մակերեսը	1. 81962 հա

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27. 11. 2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Քուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական

օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.): Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

Ջրային օրենսգիրք (2002թ.): Ջրային օրենսգրքի խնդիրներն են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մեխանիզմների ստեղծումը, ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի

ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը, ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը՝ օգտագործելով արդի նորագույն տեխնոլոգիաներ, մասնավորապես տվյալների առցանց փոխանցմամբ հոսքաչափական սարքավորումներ, բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, հիդրոտեխնիկական կառույցների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը, ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը, ստորերկրյա ջրային մարմինների համար լավ կարգավիճակի, մակերևութային ջրային մարմինների համար առնվազն լավ կարգավիճակի, իսկ խիստ փոփոխված ջրային մարմինների համար՝ պոտենցիալ լավ կամ միջակ կարգավիճակի ապահովումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999թ. և լրամշակված 2022թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 781-Ն որոշում՝ «Հայաստանի

Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

ՀՀ կառավարության 8 փետրվարի 2018 թվականի N108-Ն որոշումը՝ «բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N324-Ն որոշում՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագիծ հաստատելու մասին»:

ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 925-Ն որոշում՝ «Խոսրովի պետական արգելոց» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կանոնադրությունը հաստատելու մասին»

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվող գործունեության նպատակն է ՀՀ Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի, Լեռնանիստ բնակավայրում դպրոցի նպատակային և գործառնական նշանակությունների արդյունավետ իրացումը՝ իրականացնելով ժամանակակից ճարտարապետական լուծումներով կառուցապատում:

Նշված գործունեության իրականացման համար մշակվել է աշխատանքային նախագիծը:

Հողամասի մակերեսը կազմում 1. 81962 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0785-0151): Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացված է Հավելվածներ բաժնում:

Վերջինիս համաձայն ստորև ներկայացվում են տարածքի հետ կապված որոշ տվյալներ, մասնավորապես.

- հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,

- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

Լեռնանիստի դպրոցը նախատեսվում է կառուցել վերոհիշյալ վկայականի սահմաններում գոյություն հողամասի սահմաններում :

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. 1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում:

Պատմական ակնարկ: Լեռնանիստը Կոտայքի մարզի լեռնային գյուղերից է, որը տեղակայված է շուրջ 2000 մ բարձրության վրա՝ շրջապատված բլուրներով և մարգագետններով: Գյուղը ունի հին պատմություն, նախկինում հայտնի է եղել որպես Ղարաղուլու, իսկ ներկայիս անունը ստացել է խորհրդային շրջանում: Այստեղ պահպանվել են խաչքարեր և հին մատուռների հետքեր, որոնք վկայում են հայկական մշակույթի վաղ հետքերը: Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ՝ պահպանելով հայկական գյուղական ավանդույթները: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ: Լեռնանիստում բնակվում են Արցախից և այլ վայրերից վերաբնակված հայ ընտանիքներ, ովքեր նոր կյանք են շնչել գյուղին: Չնայած բնական կոշտ պայմաններին՝ գյուղը պահպանում է իր կենսունակությունը և ազգային մշակութային արժեքները:



Աշխարհագրական նկարագիր: Լեռնանիստը տեղակայված է Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Կոտայքի մարզի հյուսիսարևելյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան եզրամասում, դրա լեռնալանջերի ստորոտային հարթավայրում և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը ծովի մակարդակից միջինը տատանվում են 1886,0-1890,0 մետրերի սահմաններում:



Մարզկենտրոն [Հրազդան](#) քաղաքից հեռու է 5 կմ հարավ-արևելք:

Ընդհանուր նկարագիր: Լեռնանիստ գյուղի բնակչությունը հիմնականում կազմված է հայերից: Խորհրդային շրջանի վերջում և հատկապես Արցախի պատերազմներից հետո այստեղ են վերաբնակվել հայ ընտանիքներ՝ հիմնականում Արցախի տարբեր շրջաններից: Գյուղի բնակչությունը քիչ է, սակայն կայուն՝ մարդիկ հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և պահպանում են համայնքային համախմբվածությունը: Տարբեր սերունդների ներկայությունը գյուղում նպաստում է ավանդույթների շարունակությանը և գյուղի կենսունակության պահպանմանը:

4.2 Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:

Շրջանի և տեղամասի երկրաբանական



կառուցվածքին մասնակցում են Ստորին-Վերին Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները (ներկայացված տուֆերով և խոշորա-բեկորային գրունտներով), որոնք ծածկված են ժամանակակից նստվածքներով՝ ներկայացված են ալյուվիալ-խոշորաբեկորային, կավային, ավազային և տեխնածին առաջացումների հզոր շերտախմբով: Հետազոտվող տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում հետազոտման խորության սահմաններում (15.0 մետր) վերևից ներքև մասնակցում են ժամանակակից տեխնոգեն առաջացումները, Չորրորդականի ալյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ-դեյուվիալ առաջացումները:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից տարածքը տեղադրված է վաղ-ալպիական ծալքավորման վերադրված ճկվածքի սահմաններում:

4. 3 Կլիման և օդային ավազան

Կլիման բնորոշվում է հիմնականում կարճատև զով ամառով և համեմատաբար երկարատև ցուրտ ձմեռով:

Ստորև տրվում են միջինացված կլիմայական հարաչափերը՝

Ռեսուրսափրվող տարածքը գտնվում է «ցուրտ» կլիմայական շրջանում: Բնորոշ է տաք ամառը՝ **հունիս հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը $14,1^{\circ}\text{C}$ - $17,4^{\circ}\text{C}$** է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 72% (ժ.15- ին): Հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-8,0^{\circ}\text{C}$ է

Գործունեության տարածքի Կլիմայական բնութագրի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀՀՆ 22-01-2024 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը, որոնցով հաստատված «Հրազդան» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները ներկայացված են ստորև աղյուսակներում.



Աղյուսակ 1. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

Աղյուսակ 4. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								ըստ ուղղությունների	Անդրորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Հրազդան	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	Արլ	2.9	Արմ	2.4	
		2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7							

	ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1				
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0						
	հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8				
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2						
	հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7				
		2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0						

Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետությունում օդային ավազանի դիտարկումներ են կատարվում շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Վերջինս մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ:



Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Լեռնանիստ բնակավայրում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Լեռնանիստ բնակավայրի օդային ավազանների աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից: Հիմք ընդունելով վերը նշված ձեռնարկը, Մինչև 10․ 000 բնակչության թիվ ունեցող բնակավայրերի համար մթնոլորտային օդում ֆոնային կոնցենտրացիան կարելի է սահմանել որպես՝ փոշի՝ 0,071 մգ/մ³ , ծծմբի երկօքսիդինը 0.006 մգ/մ³ , ազոտի երկօքսիդինը՝ 0.023 մգ/մ³,

ածխածնի օքսիդինը՝ 0,8 մգ/մ³։ Սույն ցուցանիշները տարածվում են նախատեսվող գործունեության տարածքի վրա, հաշվի անելով, որ այն գտնվում է Լեռնանիստ բնակավայրում, որի բնակչությունը կազմում է 2025 թ. տվյալներով 3122 մարդ։

Սույն նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտ հիմնականում կարտանետվեն անօրգանական փոշի, ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, ծծմբի երկօքսիդ, մուր և կախյալ մասնիկներ։

Ժամանակավոր առաջարկություններ «Լեռնակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50-100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում։

4.4 Հողային ռեսուրսներ

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում և ներկայիս լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի ինժեներաերկրաբանական կտրվածքին մասնակցում են 4 հիմնական գրունտների շերտեր վերևից-ներքև.

Ստորև ներկայացված է հիմնական գրունտների շերտերը.

Շերտ-1 Բուսահող (տարբեր բույսերի արմատներ, ավազակավ)։ Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 0,5-2,0 մետր է։ Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 8.2) II կարգ են։

Շերտ-2 (BQ) Բազալտի բեկորախճային գրունտ, ավազի լցիչով։ Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 1,4-4,2 մետր է։ Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 50% 5.5) Vբ, 50% 12.IV կարգ են։

Շերտ-3 (BQ) Բազալտ՝ ամուր, ճեղքավորված, միջին ծակոտկեն։ Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 2,0-9,4 մետր է, Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 50% 18.1)VII, 50% 18.2)VIII կարգ են։

Շերտ-4 (BQ) Խարամներ՝ ներկայացված խճավազային,



տեղ-տեղ խճային պարունակությամբ ավազներով: Շերտի անցած հզորությունը փորված հորատանցքերով 0,9-6,3 մետր է, Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 26.3) II կարգ է:

Լիցքային գրունտները և հողա-բուսական ծածկույթը, հաշվի առնելով դրանց ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների թույլ ցուցանիշները և տեղամասում սահմանափակ տարածումը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղություններով ինժեներա-երկրաբանական տեղակետից հետաքրքրություն չեն ներկայացնում:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

4.5 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածության մոնիթորինգն իրականացվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

2023 թվականի 4-րդ եռամսակի համաձայն մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության



«Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Զրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների

առկայությունը որոշելու համար:

Հրազդանի ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում՝

Աղյուսակ 9. Հրազդանի ԶԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մՔ/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.56	3.33	77	2.10	3.44	61	2.08	3.10	67
Հրազդան	Արգել	2.19	3.73	59	2.12	3.69	58	2.01	3.13	64
Հրազդան	Երևան	2.65	3.32	80	4.40	3.94	112	5.51	5.93	93
Մարմարիկ	Հանքավան	0.57	0.48	118	0.64	0.51	125	0.73	0.45	162
Մարմարիկ	Աղավնաձոր	1.65	1.48	111	1.28	1.50	85	1.28	1.33	96
Քասախ	Վարդենիս	0.30	0.53	57	0.34	0.55	63	0.34	0.50	69
Քասախ	Աշտարակ	3.72	2.75	135	2.93	2.93	100	2.86	2.66	107

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ԶԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը՝ Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը՝ Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը՝ Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը՝ Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը՝ գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը՝ Ծաղկաձոր քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հիդրո-երկրաբանական տեսակետից գրունտային ջրերը կապված են Չորրորդականի

հասակի էյլովիալ-դեյլովիալ առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ: Ստորգետնյա ջրերը պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին, հետազոտվող տեղամասում իրականացված հորատման աշխատանքների արդյունքում ստորգետնյա ջրերը մինչև 15.0 մետր խորության սահմաններում բացահայտվել են 6.0-8.0 մետրի սահմաններում, որոնք կայունացել են 6.5-7.8 մետրի սահմաններում: Ստորգետնյա ջրերի սնուցումն իրականանում է տեղամասի հյուսիս-արևելյան և արևելյան հատվածներում էոզոիոնա- հոլմնահարման լանջերի հատվածում:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի հիմնական գետն է Հրազդանը, որը սկիզբ է առնում Սևանա լճից: Մեր հետազննվող տեղամասում փորված հորատանցքերի արդյունքում գրունտային ջրեր չեն բացահայտվել:

4.6 Կենսաբազմազություն

Կոտայքի մարզը, ներառյալ Լեռնանիստ բնակավայրը, առանձնանում է հարուստ կենսաբազմազանությամբ՝ պայմանավորված իր բազմազան լանդշաֆտներով և կլիմայական պայմաններով: Տարածքում հանդիպում են ինչպես կիսաանապատային, այնպես էլ լեռնատափաստանային և լեռնաանտառային էկոհամակարգեր, որոնք ապահովում են բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակների բնակության պայմաններ:

Բուսական աշխարհ: Կոտայքի մարզի բուսական աշխարհը շատ հարուստ է և պայմանավորված է լանդշաֆտների մեծ բազմազանությամբ՝ կիսաանապատներից մինչև բարձրալեռնային մարգագետիններ: Տարածքի բույսերը ներառում են և՛ լայն տարածված, և՛ հազվագյուտ ու Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Բուսաբանական գոտիներ

1. Կիսաանապատային և չոր մարգագետնային գոտի

- Տարածված են չորադիմացկուն խոտաբույսեր և թփեր՝ փշաքաղ, դրիս, պստիկ տատիկի խոտ, վայրի նուռ (*Punica granatum*):
- Գարնանը՝ գունեղ վայրի կակաչներ (*Tulipa armena*) և սոխուկավոր ծաղիկներ:

2. Լեռնամարգագետնային գոտի

- Բազմամյա ծաղկավոր բույսեր՝ կովկասյան սուսամբար (*Iris caucasica*), գարնանային զամբյուղիկ, ալպյան մանուշակ:
- Թմկաբլիթ, վայրի անանուխ, սիբեխ (*Primula auriculata*):

3. Անտառային գոտի (հատկապես Արզական-Մեղրաձոր հատվածում)

- Կաղնի (*Quercus iberica*), կեչի, թխկի, հացենի, վայրի խնձորենի (*Malus orientalis*), վայրի տանձ (*Pyrus caucasica*):
- Թփեր՝ մոշ, ազնվամորի, վարդենիներ:

4. Բարձրալեռնային մարգագետիններ (Գեղամա լեռներ)

- Ալպյան մարգագետնային բույսեր՝ ալպյան մանուշակ, քարածաղիկ (*Saxifraga*), գարնանային կակաչ, բազմերանգ ծաղկիկներ:

Կարմիր գրքյան բույսեր Կոտայքում

- **Վարդագույն կակաչ** (*Tulipa armena*) – գարնանային գունեղ, հազվագյուտ բույս:
- **Կովկասյան սուսամբար** (*Iris caucasica*) – ալպյան և լեռնամարգագետնային գոտիների հազվագյուտ տեսակի ներկայացուցիչ:
- **Արևելյան սոսի** (*Platanus orientalis*) – հատկապես գետերի ափերին, Հայաստանում սահմանափակ տարածվածությամբ:
- **Վայրի նուռ** (*Punica granatum*) – հանդիպում է հիմնականում կիսաանապատային և չոր գոտիներում:
- **Գեղամա կակաչ** (*Tulipa geghamensis*) – էնդեմիկ, միայն Գեղամա լեռներում աճող տեսակ:

Լեռնանիստի բուսական աշխարհը ձևավորվում է նրա բարձրադիր լեռնամարգագետնային և մասամբ անտառեզրային միջավայրի պայմաններում: Գյուղը գտնվում է Կոտայքի մարզի լեռնային գոտում, մոտ 1 850–1 900 մ բարձրության վրա, ինչը նպաստում է թե՛ մարգագետնային, թե՛ կիսաանապատային բույսերի միաժամանակյա տարածմանը:

Տիպական բուսականություն

- **Լեռնամարգագետնային խոտաբույսեր** – քաղցրահոտ եղինջ (*Urtica dioica*), վայրի անանուխ (*Mentha longifolia*), ուրց (*Thymus kotschyanus*), դաշտային շուշաններ, գարնանային զամբյուղիկներ:
- **Ծաղկավոր բազմամյա բույսեր** – վայրի կակաչներ (*Tulipa armena*), կովկասյան սուսամբար (*Iris caucasica*), ալպյան մանուշակ (*Viola caucasica*), քարածաղիկ (*Saxifraga* spp.):
- **Թփեր և պտղատու վայրի տեսակներ** – վայրի տանձ (*Pyrus caucasica*), վայրի խնձորենի (*Malus orientalis*), վայրի վարդենիներ (*Rosa canina*), ազնվամորի և մոշ:
- **Չորադիմացկուն բույսեր** – փշաքաղ, դրիս, աղասահիկ (*Atriplex tatarica*)՝ հատկապես արևոտ լանջերին:

Կարմիր գրքյան բույսեր, որոնք հանդիպում են Լեռնանիստի շրջակայքում

- **Վարդագույն կակաչ** (*Tulipa armena*) – գարնանային հազվագյուտ տեսակ, տարածված միայն որոշ մարգագետիններում:
- **Կովկասյան սուսամբար** (*Iris caucasica*) – գունեղ ծաղկավոր բույս, որը բնորոշ է բարձրադիր մարգագետիններին:
- **Գեղամա կակաչ** (*Tulipa geghamensis*) – Հայաստանի էնդեմիկ տեսակ, հանդիպում է միայն Գեղամա լեռների և հարակից լանջերի որոշ հատվածներում:
- **Սիբեխ** (*Primula auriculata*) – գարնան սկզբին ծաղկող հազվագյուտ լեռնային բույս:

Կենդանական աշխարհ: Կոտայքի մարզը, որը գտնվում է Հայաստանի հարավ-արևմուտքում, բնութագրվում է կիսաանապատային, տափաստանային, լեռնային և ջրային էկոհամակարգերով, որոնք նպաստում են բազմազան կենդանական աշխարհի ձևավորմանը: Տեղանքի փոփոխականությունը և կլիմայական պայմանները ազդում են ֆաունայի վրա, ձևավորելով յուրահատուկ կենսաբազմազանություն:

Կոտայքի կենդանական աշխարհը հարուստ է թե թռչուններով, թե կաթնասուններով, ինչպես նաև սողուններով ու միջատներով:

Կաթնասուններ՝

- Գորշ արջ (*Ursus arctos*) – Կարմիր գրքում ընդգրկված
- Կովկասյան նապաստակ (*Lepus europaeus transcausicus*)
- Արևելյան քարայծ (*Capra aegagrus*)
- Սևուկ աղվես (*Vulpes vulpes*)

Թռչուններ՝

- Սև կրզգար (*Tetrao mlokosiewiczi*)
- Սպիտակ թռչող արծիվ (*Aquila heliaca*)
- Կովկասյան սև տուց (*Tetrao mlokosiewiczi*) – հազվագյուտ տեսակ
- Փարոսափետուր (*Bubo bubo*)

Սողուններ և երկկենցաղներ՝

- Թունավոր գյուրզա (*Vipera lebetina obtusa*)
- Կովկասյան ժայռային մողես (*Darevskia*)
- Կանաչ գորտ (*Pelophylax ridibundus*)

Կոտայքի մարզում հանդիպող և **Հայաստանի Կարմիր գրքում** գրանցված կենդանական աշխարհի ներկայացուցիչները բազմազան են , որոնցից են՝

Կաթնասուններ

- **Գորշ արջ (*Ursus arctos*)** – Սակավաթիվ բնակչություն լեռնային անտառներում, հիմնականում Արզական–Մեղրաձոր արգելոցի տարածքում:
- **Արևելյան քարայծ (*Capra aegagrus*)** – Տարածվում է ժայռոտ լանջերում, վտանգված տեսակ:
- **Կովկասյան ջայլամավոր եղնիկ (*Cervus elaphus maral*)** – Աղջիկ գյուղի և Գեղամա լեռների շրջակայքում, հազվագյուտ:
- **Քարայծային մուկ (*Allactaga williamsi*)** – Շատ փոքրաթիվ բնակչություն:

Թռչուններ

- **Կովկասյան սև տուց** (*Tetrao mlokosiewiczi*) – Սպառնալիքի տակ գտնվող լեռնային անտառային թռչուն:
- **Մեծ պտերոձ արծիվ** (*Aquila chrysaetos*) – Միջին և բարձր լեռնային գոտիներում:
- **Սպիտակ պոչանի թագավորական արծիվ** (*Aquila heliaca*) – Սակավաթիվ, պահպանման հատուկ միջոցների կարիք ունի:
- **Փարոսափետուր** (*Bubo bubo*) – Գիշակեր, ապրում է ժայռերի խորշերում և անտառային եզրերին:
- **Սև կրզգար** (*Tetrao mlokosiewiczi*) – Հայտնի է որպես անտառային հազվագյուտ տեսակ:

Սողուններ

- **Գյուրգա** (*Vipera lebetina obtusa*) – Թունավոր օձ, բնակվում է չոր և ժայռոտ լանջերում:
- **Կովկասյան վիշապօձ** (*Montivipera raddei*) – Սպառնալիքի տակ գտնվող տեսակ:
- **Կովկասյան ժայռային մողես** (*Darevskia raddei*) – Տարածված է Գեղամա լեռների ստորոտներում:

Երկկենցաղներ

- **Մեծ աղվեսագույն գորտ** (*Pelobates syriacus*) – Սակավաթիվ, ապրում է խոնավ հողատարածքներում և ջրավազանների մոտ:

Ձկներ

- **Հայկական տառեխ** (*Capoeta capoeta sevangi*) – Սևանի ավազանից եկող տեսակ, հանդիպում է Հրազդան գետում և նրա վտակներում:

Լեռնանիստը գտնվում է լեռնային, անտառային միջավայրում Հրազդանի շրջակայքում, ինչը նպաստում է հարուստ կենդանական կենսաբազմազանության պահպանակմանը:

- Հիմնական տեսակի ներկայացուցիչների թվում են՝ վայրի ձիեր, եղնիկներ, մյուռոնատես *mouflon* (նշյալ են լինել Կարմիր գրքում և Հայաստանի գրքում)
 - *Armenian mouflon* – մանակյութառանձագող ոչխարի վայրի առասպելական նախորդը, որի բնակչությունը իջել է որսի եւ բնակավայրերի կորուստների պատճառով

- *Քեզդար այծ (Capra aegagrus)* – լեռնային ժայռոտ գոտիներում տարածված, պահպանված վտանգված տեսակ
- *Գորշ արջ (Ursus arctos)* եւ *Persian leopard* – լեռնաշխարհային տարածքներում հնարավոր են հանդիպել, սակայն վերջինը բացառապես հարավային եւ հարավ-արևմտյան Հայաստան է հայտնաբերվում որպես վտանգված տեսակ (10–20 անձինք)
- *Եվրասիական լուսան (Lynx lynx)* – կատվազգիների գիշատիչ, ով հանդիպում է Կոտայքի անտառներում, եւ ՀՀ Կարմիր գրքի մեջ է ներառված իր կովկասյան ենթատեսակով

Լեռնանիստի տարածքում և նրա մերձակայքում կարելի է հանդիպել մի շարք հազվագյուտ և վտանգված կենդանիներ, որոնք ներառված են Հայաստանի Կարմիր գրքում:

Դրանց թվում են՝

- **Հայկական մուֆլոն (*Ovis orientalis gmelini*)** – լեռնային մարգագետինների և ժայռոտ լանջերի բնակիչ, Հայաստանի ամենահազվագյուտ կաթնասուններից մեկը:
- **Քեզդարյան այծ (*Capra aegagrus*)** – ապրում է դժվարամատչելի ժայռոտ տեղանքներում, վտանգված տեսակ է:
- **Եվրասիական լուսան (*Lynx lynx*)** – գիշատիչ կատվազգի, որը հանդիպում է անտառային բարձր գոտիներում, սակավաթիվ և զգայուն բնակավայրի փոփոխությունների նկատմամբ:
- **Գորշ արջ (*Ursus arctos*)** – մեծ գիշատիչ, որը պահպանվում է օրենքով, լեռնային անտառներում բնակվող:
- **Պարսկական ընձառյուծ (*Panthera pardus saxicolor*)** – չափազանց հազվագյուտ և վտանգված մեծ կատվազգի, որը ժամանակ առ ժամանակ կարող է հանդիպել Կոտայքի լեռնային հատվածներում

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, և բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Լեռնանիստ դպրոցի տարածքում: Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տեղանքը բնութագրվում է տարածքի համար բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով:

4.7 Պատմության, բնության և մշակութային հուշարձաններ

Կոտայքի մարզի բնության հուշարձանները տարբերվում են ոչ միայն իրենց գեղեցկությամբ, այլև էկոլոգիական, գիտական և էկոտուրիստական նշանակությամբ: Այստեղ կարելի է հանդիպել բացառիկ բնական կամուրջներ, թե՛ բուսաբնակները, և թե՛ քարազարդ քանդակները՝ աստվածային համադրում են մշակույթը և բնությունը մի ամբողջ կառույցում:

Բնության հուշարձաններ

◦ Գառնու կիրճ և «Քարերի սիմֆոնիա»

Գառնու կիրճը՝ Ազատ գետի կիրճը, հայտնի է խոր, նեղ ժայռերով և զարմանահրաշ բնապատկերով: Այստեղ է գտնվում նաև բնության ինքնորոշմամբ ստեղծված **«Քարերի սիմֆոնիան»՝ հսկա հնգանկյուն և վեցանկյուն բազալտե սյուներով**, որոնք ներկայացնում են բնական հրաշք՝ հիշեցնող երաժշտական գործիք-տրիբունալ:

◦ Ազատի և Գառնու կիրճեր՝ բնապատկերային արժեքներ

Այս կիրճերը համարվում են մարզի առանձնահատուկ բնության պարզևներ. դրանք հարմար են քայլարշավների, բնահետախուզման և լուսանկարչության համար՝ առաջարկելով տպավորիչ տեսարաններ և բուսակազմական բազմազանություն:

◦ Խոսրովի անտառի պետական արգելոց

Այսը Հայաստանի առաջին պետական բնական արգելոցն է, ընդգրկում է մոտ 22 000 հա տարածք: Այն առանձնանում է բազմատեսակ էկոհամակարգերով՝ խիտ անտառներից մինչև ալպյան մարգագետիններ, հարուստ բուսական և կենդանական աշխարհով, այդ թվում՝ էնդեմիկ և խիստ հազվագյուտ տեսակներով:

◦ Հանքային և առողջարանային բնօգտագործում

Կոտայքի մարզում կան մի շարք առողջարաններ և բնական ռեսուրսներ՝ **Արզանի, Հանքավան և Աղվերան**, որոնք հայտնի են իրենց հանքային աղբյուրներով: Այս վայրերը ոչ միայն առաջարկում են հանգստի և թերապևտիկ պայմաններ, այլև ծառայում են որպես գեղեցիկ բնաշխարհի ու խիտ անտառապատ լանջերի մաս:

Լեռնանիստ բնակավայրի դպրոցի տեղազննության ընթացքում չեն հայտնաբերվել պամամշակութային արժեք ներկայացնող կոթողներ, հուշարձանների և արձաններ:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Նախատեսվող գործունեության տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առնելով, որ տարածքը կառուցապատված է, իսկ տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լիցքային գրունտներն ու տեխնածին առաջացումներ:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրությունները, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների,

չեն պահանջվում:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանը հարուստ է եզակի բնական հուշարձաններով, ինչպես նաև կենսաբազմազանությունը պաշտպանող հատուկ պահպանվող տարածքներով:

Կոտայքի մարզում առկա են մի շարք **բնության հատուկ պահպանվող տարածքներ** (ԲՀՊՏ), որոնք ներառում են պետական արգելոցներ, ազգային պարկերի մասեր և բնության հուշարձաններ: Դրանք նախատեսված են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ կենդանիների և բույսերի, ինչպես նաև գեղատեսիլ բնական լանդշաֆտների պահպանության համար:

Կոտայքի մարզի հիմնական ԲՀՊՏ-երը՝

- **Խոսրովի անտառ պետական արգելոց**

- Կոտայքի և Արարատի մարզերի տարածքում է գտնվում:

- Մեկն է աշխարհի ամենահին արգելոցներից (մոտ 1700 տարեկան պատմություն):


- Պահպանում է անտառային, լեռնային և կիսաանապատային լանդշաֆտներ:

- Այստեղ հանդիպում են Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայկական

մուֆլոն, բեզդարյան այծ, լուսան, գորշ արջ, ինչպես նաև հազվագյուտ բուսատեսակներ:

- **Երևանյան ազգային պարկի հատվածներ** (մասամբ Կոտայքում)

- Ստեղծվել է զբոսաշրջային և հանգստի գոտիներ ունենալու, ինչպես նաև գեղատեսիլ բնապատկերներ պահպանելու նպատակով:



- **Գառնիի կիրճի և Ազատ գետի շրջակա տարածքներ**

- Գառնիի բազալտե սյուները և Ազատի կիրճը ընդգրկված են որպես բնության հուշարձաններ և պաշտպանված են օրենքով:

- **Ազատի ջրամբարի հարակից տարածքներ**

- Պահպանվող գոտի, որն ապահովում է ջրային և ափամերձ կենսաբազմազանության պահպանումը:

- **Գեղարդավանքի շրջակայք**

- Բարձր լեռնային գոտիներ և ժայռոտ լանդշաֆտներ, որոնք ունեն բնական և պատմամշակութային արժեք:

Լեռնանիստ բնակավայրով անցնող պաշտոնական՝ ճանաչված **բնության հատուկ պահպանվող տարածք կամ պետական արգելոց** չկա:

Լեռնանիստ բնակավայրը Կոտայքի մարզի լեռնային գոտում է գտնվում՝ մոտ 1850–1900 մ բարձրության վրա:

Ամենամոտ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքը համարվում է՝

Խոսրովի անտառ պետական արգելոցը:

- Լեռնանիստից Խոսրովի անտառ արգելոցը հեռավորությունը մոտավոր կազմում է **20–25 կմ**:
- Ճանապարհը անցնում է լեռնային ճանապարհներով, ուստի իրական ճանապարհի երկարությունը և անցնելու ժամանակը կարող են կախված լինել եղանակից և ճանապարհային պայմաններից:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

5.1 Գործունեության ընդհանուր նկարագիր և տեխնիկատնտեսական ցուցանիշներ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում (կադաստրային N 28042025-07-0138) նախատեսվում է վերակառուցել դպրոցը:

Համաձայն նախագծի դպրոցը նախատեսվում է կառուցել 432 աշակերտի համար: Դպրոցը երկհարկանի է առկա է նաև նկուղային հարկ, որը ծառայում է նաև որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու

համար: Առաջին հարկում տեղակայված են 10-12 դասարանների 2-ական լսարանները, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար:

Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն: Երկրորդ հարկում առկա են նաև պատշգամբներ: Հարկում տեղակայված են լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Դպրոցն ունի 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարող բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7 մ x 7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ²: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5 մ:

Ջրահեռացումները նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը մուգ մոխրագույն: Կառույցի արտաքին պատերը իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և 30 մմ հաստությամ տրավերտինե երեսպատում՝ Ց/Ա շաղախով ամրանային ցանցի վրա:

Շինության ներքին սենքերը համաձայն նախագծի հարդարվում են գաջե սվաղով և ներկվում լատեքսային ներկով RAL 9010 երանգի:

Նկուղային հարկի, սանհանգույցների, խոհանոցային սենքերի և տեխնիկական այլ սենքերի պատերը ենթակա են Ց/Ա սվաղման՝ հետագա ներկումով կամ սալիկապատմամբ: Պատշգամբների ստորին հատվածում իրականացվող կախովի առաստաղները ֆիբրոբետոնից են, իսկ ներքին սենքերում և առաստաղներում կիրառված գիպսետվաթաթուղթը ջրակայուն է, 12.5 մմ հաստության:

Հատակների հարդարման մեջ կիրառված են կերամոգրանիտ, վինիլ և սպորտային վինիլ: Բոլոր ճաղերը մետաղական են, ենթակա են երկտակ ներկման մետաղական հակա-կոռոզիոն

ներկով: Պատերիի շրջանաձև բացվածքների հաստությունը իրականացվում է ց/ա սվաղով և տրավերտինի երանգի ֆասադային ներկով: Կենտրոնական մուտքի աջ կողմում նախատեսված է ցայտադրյուր: Արտաքին պատուհանների և դռների պրոֆիլները նախատեսված են ալյումինե, ջերմային կամրջակով, ապակեփաթեթի ներքին շերտը էներգախնայող: Ներքին վիտրաժները ալյումինե շրջանակներով, առանց ջերմային կամրջակի: Երդիկների ապակիները 1 շերտը թրծված ապակուց են, ներքին շերտը տրիպ-լեքս, համալրված օդափոխության համակարգով՝ ջերմոցային էֆֆեկտը կանխելու նպատակով:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար:

Կաթսայատուն:

1. Նախատեսված են ավտոմատացված ջրային երկու կաթսաներ Q=650 կՎտ նոմինալ ջերմարտադրողականություններով:
2. Կաթսաները համալրված են ավտոմատացված գազի այրիչներով:
3. Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսվում է ջրաջրային թերթավոր տաքացուցիչներ 2 հատ (մեկը պահուստային) Q=150 կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը:
4. Կաթսայատանը տեղակայված են նաև , ջրատաքացուցիչները, թաղանթային ընդարձակիչ անոթը, կոլեկտորները, պոմպերը:

Դպրոցի տարածքում նախատեսվում է տեղադրել 127 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Տարածքի տեխնիատնտեսական ցուցանիշներ	
հողամասի ընդհանուր մակերեսը	18192 մ²
Կառուցապատման մակերես	3576 . 9 մ²,
Կանաչապատման մակերես `	11718,1 մ²
անջրանցիկ մակերես `	2897 մ²:

Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի:

Նախատեսվող գործունեության ընդհանուր համայնապատկերը ներկայացված է ստորև բերված նկար 1-ում, իսկ գլխավոր հատակագիծը՝հավելվածներ բաժնում:

Նկար 1: Նոր կառուցվող դպրոցի ընդհանուր



համայնապատկերը

Դպրոցի ներքին հարդարման լուծումներում միջանցքներում և սրահներում նախատեսվում են չսայթակող կերամոգրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային հատակներ: Դպրոցում նախատեսվում են այլումինե արտաքին դռներ, վիտրաժներ և պատուհաններ, իսկ ներքին դռները կլինեն ՄԴՖ տեսակի: Ներքին



հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես

մաքուր նյութերից: Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին (թեքահարթակներ, հարմարեցված սանհանգույցներ և այլն): ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Շենքի տանիքն իրականացված է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Դպրոցն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Կանաչապատում և բարեկարգում: Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորության և տրամագծի փոսորակներ: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները:

Նախատեսվելու է ամբողջ տարածքի կանաչ գոտիների համար ոռոգման համակարգ : Ոռոգումը իրականացվելու է կաթիլային եղանակով:

6. ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ/ԻՆՓԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նախագծի տվյալ բաժինը կազմված է ճարտարապետա-շինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի հիման վրա:

Օդափոխություն և ջեռուցում

Ջեռուցում: Դպրոցի ջեռուցման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն ճարտարապետաշինարարական գծագրերի և գործող համապատասխան շինարարական նորմերի, մասնավորապես.

- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում»
- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»
- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

Արտաքին օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը ջեռուցման և օդափոխության համակարգերի համար $t=-21^{\circ}\text{C}$ է: Օդափոխության և ջեռուցման համակարգերի համար ջերմատարը ջուրն է՝ $80-65^{\circ}\text{C}$: Ջերմամատակարարումը իրականացվելու է դպրոցի նորակառույց կաթսայատնից: Դպրոցում նախատեսված է ջրային ջեռուցում, երկխողովականի, համընթաց շարժումով, ջրի մեխանիկական շրջանառությամբ համակարգով: Առաջին հարկի մարտկոցների մագիստրալ մատակարար և հետադարձ խողովակաշարերը անցնում են հատակի հաստության միջով, իսկ երկրորդ հարկի ջեռուցման մարտկոցների մատակարար և հետադարձ խողովակները անցնում են առաջին հարկի առաստաղի տակով: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ջեռուցման մարտկոցներ, որոնց մարտկոցների ջերմատվությունը կարգավորելու համար տեղադրվելու են ջերմակարգավորիչ փականներ: Բոլոր ջեռուցման սարքերի վրա նախատեսված են օդի հեռացման փականներ և դատարկման փականներ: Ջերմային հանգույցում օդահեռացման նպատակով տեղադրվում են ավտոմատ օդահաններ: Ջեռուցման բոլոր մագիստրալ խողովակները մեկուսացվում են 10մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե մեկուսիչներով:

Օդափոխություն: Դպրոցի օդափոխության համակարգը նախատեսված է ՀՀ գործող նորմերին համապատասխան: Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ: Էներգաարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր՝ ռեկուպերատորով: Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական՝ էլ. շարժաբերով: Փականը բլովված է արտածման օդափոխիչի հետ: Սանհանգույցներից կազմակերպված են մեխանիկական դրդմամբ արտածման համակարգեր: Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով: Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև ճարտարապետա-շինարարական գծագրերը, գլխավոր հատակագիծը, տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10

խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմամեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է $Q_{max}/վրկ=2.767$ վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ $2.5/վրկ$ (2 շիթ): Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Կենցաղային կոյուղու համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Անձրևաջրերը կհավաքվեն ոռոգման համար նախատեսված 2 ջրի ռեզերվուարներում՝ $46մ^3$ ընդհանուր ծավալով, և կօգտագործվեն դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման համար:

Էլեկտրամատակարարում: Դպրոցի նոր կառուցվող շենքի էլեկտրամատակարարման նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ22-03-17, ՍՆԻՊ 3.05.06-85 դրույթների: Ըստ հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են երկրորդ կարգի: Նախագիծը կատարված է ճարտարապետա-շինարարական գծագրերի և հարակից բաժինների կողմից ներկայացված առաջադրանքների հիման վրա: Նախատեսվում է 0.4կՎ լարման սնող 2մալուխների (1 մալուխը պահուստային) ներանցում -3.60 նիշում գտնվող էլ. վահանայինի սենքում տեղակայված փնջային փոխարկիչ: Էլ. լուսավորության ցանցը նախատեսված է հետևյալ տեսակների. աշխատանքային, վթարային, տարհանման, վերանորոգման:

Բաշխիչ վահաններից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով, որոնք տեղադրվում են դակված մալուխների վրա: Խմբային ցանցը իրականացվում է պղնձե չիրկիզվող ԹԹժՎ-LS մակնիշի մալուխներով, անցկացված ճկուն խողովակների մեջ: Նախատեսված են լուսադիֆուզային լուսատուներ համապատասխան հզորություններով: Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենքերում^ա հատակից 0.8մ, վահանները^ա 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ: Կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի կաբինետներում յուրաքանչյուր սեղանի տակ նախատեսված է հատակի մեջ տեղադրվող տուփ սեղանների վրա տեղադրվող վարդակների համար: Հաղորդագծերը նախատեսված են պղնձե մալուխներով, տեղադրված խողովակների մեջ: Վերջիններս տեղադրվում են բետոնե հատակի տակ մալուխատարերով: Ցանցի ղեկավարումը իրականացվում է ուսուցչի վահաններից: Նախատեսված է տանիքի ջրհավաք ձագարների ջեռուցում: Օդափոխության սարքերի և պոմպերի սնող գծերը նախատեսված են պղնձե մալուխներով: Հրդեհի դեպքում օդափոխության ցանցը անջատվում է: Նախատեսված են անկախ խզիչներ: Որպես

անվտանգության լրացուցիչ միջոց նախատեսվում է հողանցման օջախ 4.0 օհմ դիմադրությամբ: Էլեկտրաէներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարերով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում^a երեք հաղորդալարերով (L1N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալար, սկսած մուտքի վահանից: Նախատեսված է կաթսայատան և կոյուղու մաքրման ցանցերի էլ.սնուցում ԳԲՎ-1 և ԳԲՎ-2 բաշխիչ վահաններից: Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

Արևային վահանակների տեղադրում: Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կառուցվող շինության տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: ՖՎ վահանակները տեղակայվում են այլումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված այլումինից են: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները իջեցվում են շենքի հորանների միջով՝ ծալքախողովակի մեջ և միանում է շենքի էներգետիկական սենյակում գտնվող փոխակերպիչներին: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

Արևային վահանակների տեղադրումը իրականացվելու է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագայում արևային պանելների սպասարկումը և խափանման աշխատանքները:


7. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Շինարարության կազմակերպման նախագծային աշխատանքները կազմված է նախագծային առաջադերանքի և ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ՀՀՇՆ1-1.01-95, հիմնական դրույթներին համապատասխան և «Շինարարության կազմակերպման նախագիծ» բաժնով ամրագրված դրույթներով:

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32տ բեռնատվություն ունեցող ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Շինարարության տևողությունը կազմել է 24 ամիս: Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- Նախապատրաստական շրջանի տևողությունը
- Նախագծվող օբյեկտի շինարարությունը
- Կոմպլեքսային փորձարկումներ և անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:
- Առանձին աշխատանքների կատարման տեղափոխման այլ ժամկետը, որը կապված է կոնկրետ արդյունաբերական պայմանների հետ, տեխնոլոգիական ընդմիջումների անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է կազմի աշխատանքների կատարման գրաֆիկ, համաձայնեցնի և հաստատի պատվիրատուի հետ:



Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 24 ամիս

7.1 Ինժեներա-տեխնիկական և բանվորական անձնակազմ

Աշխատանքների բնույթից ելնելով բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ և մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները տվյալ շինարարությունում անհրաժեշտ է ավարտուն շինարարական արտադրանքի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական-որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Կառուցվող շենքի շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ) մասնագիտացված բրիգադներով:

Մասնագիտություն	Կարգը	Քանակը
Քնտռնագործ	4	20
	3	6
Ամրանագործ	3	8
Զոդող	6	4
Առաստանող և առաստանիչ բանվորի ազդանշանների	Աշխատանքների թույլատրության Վկայական	2
Տանիքագործ	5	5
	3	7
Հյուսն	9	6
Պատշար, քարտաշ	4	14
Հարդարող	5	6
	3	8
Էլ. մասնագետ	4	6
Կ.Ջ. մասնագետ	4	6
Բանվորներ		30
Տեխնիկական աշխատանքների ծախսեր (այլ թվում հակահրդեհային և աշխատանքի անվտանգության մասնագետ)		5
Ընդամենը՝		127.00

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

7.2 Աշխատանքի կազմակերպում և աշխատանքի պաշտպանություն

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը և գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս հաշվի են առնվելու քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգները:

Շինարարության ընթացքում ձեռնարկվելու են բնապահպանական կառավարման պլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում,

օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները: Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Հետևողական մշտադիտարկումներ են իրականացնվելու շինարարական գործունեության բոլոր փուլերում՝ արձանագրելու շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամապատասխանությունները շինարարության ոլորտի համար սահմանված պահանջներին, նորմերին և չափորոշիչներին: Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողը կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Փոշենստեցման նպատակով տարածքում իրականացվելու է պարբերական ջրցան:

Թույլ չտալու համար նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան սարքին և մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը խոնավացվելու է և ծածկվելու պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալու փոշու առաջացում և տարածում: Ընդհանուր ջրապահանջը, ներառյալ նաև ջրցանի համար պահանջվող ջրի ծախսի հաշվարկը ներկայացված է ստորև .

Շինհրապարակում ջուրն օգտագործվում է արդյունաբերական, կենցաղային և հրդեհաշիջման նպատակներով: Որի սպառման հաշվարկման մեթոդը հիմնված է ըստ СНиП 3.01.01-85.

Ընդհանուր գնահատված ջրի սպառում որոշվում է բանաձևով:

$$Q_{\text{сум}} = Q_1 + Q_2 + Q_3$$

Որտեղ՝ Q_1 - ջրի սպառումը արտադրական կարիքների համար;

Q_2 - ջրի սպառումը տնտեսական կարիքների համար;

Q_3 - հրդեհաշիջման համար ջրի սպառում;

Արտադրության կարիքների համար ջրի սպառման հաշվարկ

$$Q = 1,2 \times K \times 1 \text{ н } \sum Q_{\text{ср}} , 8 \times 3600 \text{ л/վ}$$

Որտեղ՝ 1,2 – չհաշվառված ջրի սպառման գործակից, միջին արտադրության ջրի սպառում մեկ հերթափոխով,

K_н – ջրի անհավասար սպառման գործակիցը հավասար է 1.6-ի,

8 – հերթափոխի ժամերի քանակը:

Ընդհանուր սպառում՝ շինհրապարակի կարիքները բավարարելու համար.

$$Q_{\text{tot}} = Q_1 + Q_2 + Q_3 = 0,07 + 0,04 + 5,00 = 5,11 \text{ л / վ:}$$

Երեկոյան ժամերին դադարեցվելու է աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղի:

7.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և տեխնիկական բնութագրերը բերված են ստորև.

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	2	3	4
1	Ավտոմոբիլ	բեռնատվ. 25տ	4
2	Կողային ավտոմեքենա	բեռնատվ. 5տ	3
3	Ավտոբետոնախառնիչ	տարողութ-յունը 12խմ	2
4	Ավտոբետոնապոմպ	ABC-6/DA	1
5	Թորթամուրն	Makita	2
6	Թորթուավոր էքսկավատոր	Hyundai R290	1
7	Անիվավոր էքսկավատոր	CAT 428F	1
8	Ավտոամբարձիչ բեռնատվ. 32տ	KAMA3 53229-1040-15	1
9	Ջեռքի պնեվմատիկ	40կգ	1
10	Խորրային վիբրատոր	Իսլ	3
11	Եռակցող ապարատ	TDM-300C	4
13	Ջեռքի էլեկտրոգործիքներ	–	10

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի

խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում վտանգավոր նյութերի կիրառություն չի նախատեսվում: Շինարարական նյութերի պահեստավորումը կիրականացվի ըստ ՇԿՆ-ի:

**8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս նախաձռնողը ղեկավարվելու է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցվելու են աղմկոտ աշխատանքների կատարումը:

8. 1 Ազդեցությունների ընդհանուր նկարագիր

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

8. 2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

8. 3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

8. 4 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար.
- Շինարարական հրապարակում նախատեսված է նաև հարթակ տեխնիկայի լվացման համար: Նախքան շինհրապարակից ելքը անհրաժեշտ է իրականացնել տեխնիկայի անիվների և արտաքին հատվածի վրա բետոնային մնացորդների լվացում, որոնց ջրերը հավաքվում են հարևանությամբ նախատեսվող պարզարանում: Նստեցումից հետո ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման և այլ հնարավոր նպատակներով, իսկ հատակի նստվածքը պարբերաբար կհեռացվի շինհրապարակից շինարարական աղբի հետ:

8. 5 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:

- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
- Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

8. 6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8. 7 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման

սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

8. 8 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70

դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլխոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլխոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ $\leq 200 \text{ կգ/մ}^2$: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$L_{աղ} = 23 \lg m_t - 10 \text{ դԲ}$, երբ $m \geq 200 \text{ կգ/մ}^2$

$L_{աղ} = 13 \lg m_t - 13 \text{ դԲ}$, երբ $m \leq 200 \text{ կգ/մ}^2$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ^2 ,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ^2 $K=1,3$

$M = 1,3 \times 200 = 260$

$L_{աղ} = 13 \lg m_t - 13 = 18,2 \text{ դԲ}$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ատր}$ ըստ աղույսակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$

Գլխոնի համար՝

$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլխոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության

նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները				
Միջին երկրաչափական հաճախականության		Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով		
օկտավային շերտեր, Հց		Թրթռա արագացում		Թրթռա արագություն
		մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3 դԲ
2		10,0	80	0,79 84
4		11,0	81	0,45 79
8		14,0	83	0,28 75
16		28,0	89	0,28 75
31,5		56,0	95	0,28 75
63		110,0	101	0,28 75
		10	80	0,28 75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները				
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:				
Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. 9 Թափոնների կառավարում

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ

կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;

- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինությունների կառուցման ընթացքում, շինարարական և կենցաղային աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությամբ սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

Շին.թափոնները կհավաքվեն համաձայն ՇԳՀ-ի, համաձայն որի, թափոնների համար նախատեսված 2 աղբաման, չափերը 1.5x2.5x2.5: Դրանք կհեռացվեն համապատասխան թափոնավայր՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմերի և ընթացակարգերի: Կենցաղային աղբի տեղափոխման համար պայմանագիր կկնքվի Հրազդանի համայնքապետարանի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպության հետ:

Վերը նշված թափոնները՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	9120060101004	4500 խմ
2.	Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	670 խմ
3	փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	1250 խմ

Շինաղբի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Հրազդանի համայնքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:
Երկակի օգտագործման նյութեր առկա չեն:

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Դպրոցի նոր շենքի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. հուլիսի 14-ին, ժամը ` 14. 00 Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի վարչական շենքում: 1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 12.06.2025 համարում:	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏՀՀ)
